

## Կարծիք

**«Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների և Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու արդյունքում ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների և Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու արդյունքում ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի<sup>1</sup> ուսումնասիրության հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի նկատառումները հանգում են հետևյալին.

1. Նախագծի 1-ին և 2-րդ հավելվածներով հաստատված ցանկերի 2-րդ սյունյակներում թվարկվում են փոփոխվող կամ նոր ընդունվող *իրավական ակտերը*: Մինչդեռ, ըստ նշված հավելվածների վերնագրերի՝ համապատասխան ցանկերում ներկայացվում են լրացման ենթակա Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա *օրենքները* և Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու արդյունքում ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա *օրենքները*:

Համանման մոտեցում տեղ է գտել նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի 2016թ. փետրվարի 10-ի թիվ ՆՀ-170 հրամանագրում:

Ուստի, առաջարկում ենք Նախագծում ապահովել տերմինների միատեսակ կիրառություն ՀՀ վարչապետի՝ քննարկման ներկայացված նախագծի և ՀՀ Նախագահի հրամանագրի պահանջների համապատասխան:

2. Նախագծի հավելվածների «Պատասխանատու կատարողը» վերտառությամբ 3-րդ սյունյակում տարբեր միջոցառումների համար նշված կատարողների ցանկում նշված են տվյալ օրենքի մշակման համար շահագրգիռ ոչ բոլոր մարմինները: Օրինակ՝ Նախագծի 2-րդ Հավելվածով հաստատված ցանկի՝ ««Հատուկ քննչական ծառայության մասին»

---

<sup>1</sup> Այսուհետ՝ Նախագիծ

օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 20-րդ կետում ՀՀ հատուկ քննչական ծառայությունը նշված չէ որպես պատասխանատու կատարող, իսկ Նախագծի 2-րդ Հավելվածով հաստատված ցանկի 2-րդ սյունյակի 9-րդ կետի կատարման համար պատասխանատու ՀՀ արդարադատության նախարարության հետ միասին նշված է միայն ՀՀ առողջապահության նախարարությունը:

Մեկ այլ դեպքում «Բազմազավակ ընտանիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ 42-րդ կետում որպես պատասխանատու կատարողներ նշված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ արդարադատության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և այլ շահագրգիռ նախարարություններ:

Ուստի, առաջարկում ենք վերանայել մեջբերված, ինչպես նաև կարծիքի ներկայացված նախագծի մյուս կետերում նշված պատասխանատու կատարողների ցանկը՝ հաշվի առնելով կոնկրետ օրենքների կարգավորման ոլորտները:

3. Նախագծի 1-ին Հավելվածով հաստատված ցանկի 2-րդ սյունյակի 8-րդ կետում տեղ են գտել «ՀՀ կառավարության մասին», 9-րդ կետում՝ «ՀՀ Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», իսկ 10-րդ կետում՝ «Կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, այնինչ վերոնշյալ բոլոր հարցերը կարող են, ըստ էության, կարգավորվել մեկ միասնական ակտի՝ «ՀՀ կառավարության մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկել տվյալ հարցերը նշված երեք ակտերի փոխարեն մեկով կարգավորելու նպատակահարմարությունը:

4. Նախագծի 2-րդ Հավելվածով հաստատված ցանկի 2-րդ սյունյակի 8-րդ կետում նշված «ՀՀ քրեակատարողական օրենսգիրք», 9-րդ կետում նշված «ՀՀ քրեական օրենսգիրք», ինչպես նաև 11-րդ կետում նշված «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» ձևակերպումները անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «ՀՀ քրեակատարողական օրենսգրքի նախագիծ», «ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ» և «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նախագիծ» ձևակերպումներով:

5. Նախագծի 2-րդ Հավելվածով հաստատված ցանկում առաջարկվում է 6-րդ սյունյակի համարակալումը փոփոխել՝ դարձնելով «5-րդ», ինչպես նաև այդ սյունյակի վերնագրի մեջ կիրառվող «հոդվածներ» բառը փոխարինել «դրույթներ» բառով, քանի որ նշված սյունյակում համապատասխան փոփոխություններ կատարելու հիմք են նաև ՀՀ

Սահմանադրության մի շարք գլուխներ: Անհրաժեշտ է նշված սկզբունքը պահպանել նաև Հավելված 1-ով հաստատված ցանկում, ինչպես նաև հստակեցնել՝ Նախագծի 1-ին Հավելվածով հաստատված ցանկի 5-րդ սյունյակում նշվում են Սահմանադրության համապատասխան հոդվածները, թե՛ գլուխները:

6. Նախագծի 2-րդ Հավելվածով հաստատված ցանկի 6-րդ սյունյակի առանձին կետերում, որպես համապատասխան փոփոխությունները կատարելու հիմքեր, առաջարկում ենք ավելացնել նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ և 8-րդ գլուխները (օրինակ՝ 10-րդ, 12-րդ և 20-րդ կետեր):

Դրանից բացի, Նախագծի 2-րդ Հավելվածով հաստատված ցանկի որոշ կետերում առաջարկում ենք ավելացնել ՀՀ Սահմանադրության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ 2-րդ գլուխը (օրինակ՝ 34-րդ կետ):

7. Նախագծի 1-ին Հավելվածի 2-րդ սյունյակի 13-րդ կետում առաջարկում ենք Նախագծի վերնագրից հանել փակագծերը և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ**